




ԵՐԲԱՐԱՐՆԵՐ

ԵՐԲԱՐԱՐՆԵՐ

ԵՐԲԱՐԱՐՆԵՐ

ԹԻԻ 114

27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱՐԱՐՆԵՐԸ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՐԲԱՐԱՐՆԵՐ
ՏՈՒՐԱԿԱՆ
ՎԵՐՈՒՄ

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՆ

1914

Յ Ա Բ Ո Ւ Յ Ն

Առաջիկայ 1914են սկսեալ «Հանդես Ամսօրեայ» ի բնութեան առարկայ պիտի ըլլան մասնաւորապէս Հայ ազգագրութիւնն, ժողովրդագիտութիւնն, ճարտարապետութիւնն, պատմութիւնն, գեղարուեստն եւ— յիշատակութիւնն համեմատական կրօնախօսութեան (vergleichende Religionswissenschaft) ասկեանորագոյն մեթոդով:

Տարեկան բաժնեգինն է Կանխիկ վճարմանը

Տանկասանի համար		15 Ֆր. 72 դ.
Ռուսասանի »		6 ռուբլի
Ամերիկայի »		3 դոլար

Հասցեն է՝

RÉDACTION DE LA REVUE „HANDES AMSORYA”

VIENNE (Autriche), VII, Mechitharistengasse 4



ԿԱԹՈՂՈՍԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՒԱԲԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի 27 Սեպտեմբեր 1913 Թիւ 114

«Մերական Բանաստեղծական Պիոս Ժ. կը մտայք որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շա-
բաթական Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բուրգաւանան կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ կարդ. Մէրի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիո
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնամարտ:

ԴԵՊՈՒՆԵՐ ԵՒ ՍԿԶԻՆՆԵՐ

ԷԶՄԻԱՇՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

(Շար.)

Սույ Կաթողիկոսին՝ ի Մարաշ Բողոքա-
կանաց ժողովարանին մէջ քարոզելով, անոնց
հետ անխտրաբար հողեւորապէս հաղորդակ-
ցած ըլլալուն յատկանշական և եպիսկոպոսի ա-
րարքին վրայօք կը ստիպուինք հարցում մը
ուղղել իրեն. «Բողոքականները հերետիկոս
են թէ ո՛չ».— Ն. Ս. Օծը որ հովուապետ
մըն է էջմ. Եկեղեցւոյ մէջ, պէտք է որ աս-
տուածաբանօրէն, Աւետարանի ճշգրտութեամբ
և ճշմարտութեամբ, Սրբոց Հարց նախան-
ձախնդրութեամբ պատասխանէ այս հարցման:

Եթէ ըսէ որ «Բողոքականները հերետիկոս

զեն», ուրեմն պիտի ստիպուի դաւանելու թէ
Քրիստոսի Եկեղեցւոյն մէջ ընաւ հերետիկոս
չէ եղած, քանի որ հին հերետիկոս ըսուած-
ները Բողոքականներուն (որոնք ութսուն տե-
սակէ աւելի են) մոլորութեանց միայն մէկ
քանին ունէին և ոչ ամէնը. հետեւաբար Ս.
Հայրերը, Ս. Ժողովները, ընդհանուր Ուղ-
ղափառ Եկեղեցին մոլորած է՝ հերետիկոս
դոյութիւնը կարելի ենթադրելով. զանոնք
անիծելով, մերժելով, բանադրելով: Եթէ
Բողոքականները հերետիկոս՝ այսինքն՝ ճշ-
մարտութիւնները ուրացող անոր գէ՞մ ըն-
քոտացող ու մաքառող չեն — ուրեմն Աւե-
տարանը անիմաստ դի՞ք մըն է Աւետարանը:
Եթէ ոչ, ապա ինչո՞ւ Քրիստոս պարզապէս ունայ
նախօսներ են, զի Քրիստոս և Աւետարանը
Աւետարանը իբրեւ անսոյս ապացիւ հաւատա-
լիք կը քարոզեն այնպիսի բաներ, զորոնք
Բողոքականները բացարձակապէս կը մերժեն

Լ Ղայս պէտք է գիտնայ Ստոյ Շնորհագաւորք :

Եթէ Բողոքականները հերետիկոս չեն —
ուրեմն այդ Շնորհազարդ Հայրապետը ինչո՞ւ
ձեռնադրութիւններ կ'ընէ, ինչո՞ւ կը պա-
տարագէ, կը խոստովանցնէ, Սրբոց բարե-
խօսութիւնը կը քարոզէ, ևն., ինչո՞ւ. ինք
այս բաները հաւատոյ մաս կը համարի՞ թէ ո'չ.
Եթէ կը հաւատայ, ուրեմն պէտք է գիտնեն,
թէ Բողոքականները զատուք կը մերժեն,
կ'ուրանան. ի՞նչպէս այո՞ւն և ոչը միանգա-
մայն ճշմարիտ կ'ըլլան. կա'մ ինքը կոա-
պաշտ է, Նեոի դաւակ է, ինչպէս Բողոքա-
կանները կ'ըսեն. կա'մ Բողոքականները հե-
րետիկոս են. չկա'յ միջին եզր:

Ուրեմն Շնորհազարդ Հայրապետը, եթէ չ'ուզեր ինքն ալ Բողոքական ըլլալ, պիտի ստիպուի — կը յուսամ — խոստովանելու թէ «Բողոքականները հերետիկոս են»:

Եթէ այսպէս է, ուրիշն ինքը ծանրապէս օրինազանց է, և կանխաւ իսկ զտուպարտուած՝ 1. Ս. Հայրերէն, — 2. Ս. Եկեղեցիէն, — 3. Առաքեալներէն, — 4. Բրիտոս Աստուծմէ:

1. Հատորներ պէտք պիտի ըլլար. Սոյ կաթողիկոսին զատապարտութիւնը Ս. Հայ-րերէն ապացուցանելու համար. Ս. Հայրերէն, որոնք բացարձակապէս կը գարշէին հերետիկոսներէն, ո՛չ կ'ողջունէին, ո՛չ կը խօսէին, ո՛չ կը կենակցէին. կը հարուածէին զանոնք բանիւ և գրով, և հաւատացեալները կը զգուշացնէին անոնցմէ. Համոզուելու համար՝ բաւական է լսած ըլլալ ներսէսներու, Աթա-նասներու, Օգոստինոսներու, Եպիփաններու, Կիւրելոյներու և անթիւ սնահամարներու աւուռներու. բայց ներելի չէ միզ յաւէտ դեպերիլ. միայն մէկը պիտի յիշենք, ա-մենէն հինը, գրեթէ Առաքելոյց աշակերտը, հռչակաւոր Սուրբը և մեծախուռն մարտիրոսը Ս. Իրէնէոսը. Սա ապրեցաւ երկրորդ դարու մէջ և մեռաւ երրորդին սկիզբը, Լիոնի Աթոռին վրայ. Աշակերտ եղած է Ս. Պօղոս-կարպոսի, աշակերտին Ս. Յովհաննէս Աւետարանչի. Ս. Իրէնէոս մեծախուռն վարդապետ մը եղաւ, նախանձախիռդիւ վարդապե-տութեան անարատութեանը, ինչպէս իւր

վարդապետան Պողիկարպոս, որ ինչպէս ինք կը պատմէ, անհաշտելի ուտիս էր հերետիկոսաց, և կը վախճէր անոնցմէ: Կը պատմէ դարձեալ Իրէնէոս թէ օր մը Ս. Յովն. Աւետարանիչ Ձմբւնիոյ մէջ ջերմօղկները գացած ըլլալով, հոն տեսաւ Կերինդոս հերետիկոսացիսը, և սեկնեցաւ, վախճալով որ մի՛ գուցէ ջերմօղկը կործանէր անոր ներկայութեան համար: Ս. Պողիկարպոսն ալ օր մը խոյս տուած էր Մարկիոնէն, երբ սա կ'ըսէր անոր. «Դու զիս լուս կը ճանչնաս» — «Այո՛. կը ճանչնամ զքեզ, պատասխանած էր Ս. Պողիկարպոս, կը ճանչնամ զքեզ. դու սագայելին առջինեկն ես»: Ասանք բոլոր կը յիշէր Ս. Իրինէոս. ասոնք բոլոր իր մտքին մէջ անջինջ գրոշմուած էին. և գրեց իր երեւելի գիրքը, գրեթէ առաջին հեղինակութիւն Բրիտոնոնեայ հայրախօս մատենագրութեան, և անուանեց զայն «Ընդդէմ հերետիկոսաց», զորո իստագոյնս կը յանդիմանէ, կը ձաղկէ, կը նշաւակէ: Լիոնի մարտիրոսները զինքը ելեւթերիոս Քահանայապետին յանձնարարեցին իբր «Նախանձաւոր Ասակին Քրիստոսի»: Փղորինոս քահանան, զոր ճանչցած էր Ձմբւնիայի մէջ, իր սրտակից բարեկամն էր: Բայց երբ նա սկսաւ նոր վարդապետութիւններու միտելու, Իրէնէոս ազդեցիկ կերպով անոր դատապարտութիւնը պահանջեց Վիկտոր Քահանայապետէն, ցոյց տալով անոր ամբարիշտ հերետիկոսութիւնները և հայհոյութիւնները: Ս. Իրէնէոս հերետիկոսները եկեղեցիէն դուրս կը դասէ և կ'անուանէ զանոնք նայիցիչ, և անիծապարս: Ս. Իրէնէոս հեռեւորներ ունեցաւ եկեղեցւոյ բոլոր հայրերը, որոնք նոյնպէս կը զարչէին «Քրիստոսի վարդապետութիւնը աղաւաղողներէն»: Մինչեւ իսկ Հայրաք իրաւունք կու տայ իրեն եւ կը գովարանէ զինքը:

2. Ս. Հայրերէն զատ նաեւ Ընդհանրաւ
կան Ուղղափառ Ս. Եկեղեցին եւս միեւնոյն
ղիւթը բռնած է հերետիկոսաց հանդէպ :

Իսկ տեսակ Շնորհազարդ, որպիսի Հայ-
րապետ է Ստյո Կաթողիկոսը, որ Եկեղեցւոյ
կ'անուատէ, Եկեղեցւոյ՝ որ իբր իր աստուա-
ծաւնից պարտքը, իբր անփոփոխելի սկզբ-

բունք, իբր Գրիստոսատուր պաշտօն, միշտ եւ ամէն տեղ, իր տիեզերական եւ մասնակի ժողովներով, Բահանայապետներու վճիռներով, աստուածաբան վարդապետներով դիմապրտած է՝ անպատկառ եւ անուղղայ հերետիկոսներու դէմ, որոնք կ'եղծանէին ճշմարտութիւնը, վարդապետութեան անսրատութիւնը, զանոնք դատապարտած է, ի հաղորդութենէ մերժած եւ հաւատացելոց արգիլած է անոնց հետ հաղորդակցիլ: Այսչափ տարիներու եկեղեցականութեամբն հանդերձ Ասոյ Կաթողիկոսը բնաւ չլսեց արդեօք ինչ որ պատարալի մէջ բարձրաձայն կ'աղաղակէ տարկաւոր վասն հերետիկոսաց. «Ձայնախիսն նզովէ Կաթողիկէ եւ Առաքելական եկեղեցի»: Իր այս գործովը կ'ապացուցանէ ուրեմն թէ էջմիածնական եկեղեցին ո'չ Կաթողիկէ Ուղղափառ է եւ ոչ Առաքելական, կամ գոնէ անկէ ճանչցուած իբր մասն եւ հպատակ: Եթէ Բողոքականները հերետիկոս են, ուրեմն Սոյ Հայրապետը՝ Յ. Առաքելոց եւ Գրիստոսի հետ ալ հակասութեան մէջ է: Եւ ըստ Առաքելոյն չի գիտեր թէ «Որպէս պարսիցէ նմա ի քան Ասուծոյ Երջել, որ է եկեղեցի Ասուծոյ կենդանոյ, սիւն եւ հաստատութիւն նեմարսութեան» (Ա. Տիմ. Գ.): Այո՛. «Գլուխ պատուիրանին սեր է». բայց սէր՝ ուղղափառ հաւատքի վրայ հաստատուած. «Ի սուրբ սրէ եւ ի մսաց բարեաց եւ յանկեղծաւոր հաւատոց: Յորոց ոմանք վրիպեցան, խոտորեալ յունայնութիւն բանից» (Անդ Ա.): Դատապարտելի է ինչ որ է «Հակառակ ողջամիտ վարդապետութեան, որ ըստ Աւետարանի փառաց երանելոյն Ասուծոյ է» (Անդ): Մեծաջան փութով կը խրատէ ապա առաքելը՝ յարելով. «Ունիցիս հաւաստ սրբով մօտ, զոր ոմանք մերժեալ յանձնաց իւրեանց՝ նաւակոծեցան ի հաւատսն, որոց սակի են Հիմենոս եւ Աղեթսանդրոս, զորս մատնեցի սասանայի, զի խառնեցին չնայիոյել» (Անդ): Կը տեսնէ՞ք, ինչպէս կը վարուէր Պօղոս Առաքելը հերետիկոսներու հետ... Շնորհագարդ Հայրապետին տրամադօրէն հակառակ: Ո՞ր մէկը իրաւունք ունի... Առաքելը սոսկալի կերպով հակա-

ռակ է անխտրականութեան. «Ի ժամանակս յետինս քակեսցին ոմանք ի հաւատոցն». ուստի կը խրատէ իր աշակերտը. «Բարեւոք պատշոնեայ ինիցիս Գրիստոսի Յիսուսի, սնանիցիս բանիւ հաւատոց, եւ ԲԱՐԻՈՒՔ վարդապետութեամբն» (Անդ Դ.): Շարունակ կը վերադառնայ Առաքելը անխտրականութեան դէմ. «Իսկ եթէ ոք այլապէս ինչ ուսուցանիցէ, եւ ոչ անայցէ ողջմտութեան բանից Տեառն մերոյ Յիսուսի Գրիստոսի, եւ ըստ աստուածպատշոնեան վարդապետութեան, այնպիսին հպարտեալ է եւ ոչինչ ոչ գիտէ... Խառնախոսութիւնք ապականելոց մսաց մարդկան եւ օտարացելոց ի նեմարսութեան անսի, որ ՇԱՀԱՎԱՃԱՌ համարին զաստուածպատշոնութիւնն. բայց դու ՄԵՐԺԵՍՋԻՐ յայնպիսեաց անսի» (Անդ Զ.): «Վրիպեցան ի հաւատոց... Այլ դու, ո'վ մարդ Ասուծոյ, փախի՛ր յայնցանէ... Մարտիրոս զբարեւ մարտն հաւատոց... դաւանեցեր զբարեւ դաւանութիւնն» (Անդ): «Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն՝ զորս յինէն յուար, հաւատով եւ սիրով որ ի Գրիստոս: Զբարեւ աւանդն պահեսցի» (Բ. Տիմ. Ա.): «Զոր յինէն յուար, զայն աւանդեցես հաւատարիմ մարդոց:» — Եւ, ըստ Առաքելոյն, Ս. Հաւատքը մեր քմահաճոյքէն կախում չունի. մենք չենք կրնար դայն փոխել՝ ըստ կամաց. զի մենք Գրիստոսի միայն կը պատգամորինք: Եթէ չհաւատամք, նա (Գրիստոս) հաւատարիմ մնայ, ուրանայ զանձն ոչ կարէ... Բանք նոցա իբրեւ զհաղցիկեղ ճարակ գտանեն. որոց սակի են Հիմենոս եւ Փիղեսոս, որք վրիպեցան ի նեմարսութեան. եւ կործանեն զհաւաստ ոմանց: Այլ հաստատուն հիմն Ասուծոյ կայ եւ ունի զկնիս զայս, եթէ՛ ծանեալ Տեա զայնոսիկ որ իւրն են (Անդ, Բ.): «Որ ունիցին զկերպարանս աստուածպատշոնեան, եւ ի զօրութեան անսի նորա ուրացեալ իցեն. եւ ԽՈՐՇԵՍՋԻՐ ի նոցանէ... Որպէս Յանեսն եւ Յամրես հակառակ կային Մովսիսի, նոյնպէս եւ սոքա հակառակ կան նեմարսութեան. մարդք ապականեալ մօտ, անպիտանք ի հաւատս: Այլ դու հաստատուն կա՛ց՝ յոր ուսարդ» (Անդ, Դ.):

ո՛րքան պակասած է իր կոչումին, պաշտօնին, խղճին, հաւատքին մէջ, հերետիկոսներու հետ մտերմօրէն հաղորդակցեր է, զանոնք գայթակղեցնելով և հաստատելով իրենց Քրիստոսամերժ մոլորութեանց մէջ. գայթակղեցնելով նաև իր ժողովուրդը, կրօնքի ամենէն էական կէտերուն ուրացումը ինք անտարբեր և անշնայ ցոյց տալով, քանի որ խտիր չըկայ Հայ և Բողոքական բեմին միջև, Հայ և Բողոքական հաւատալեաց միջև, քանի որ երկուքն ալ եղբայր են, մտերիմ են, համալու են, միեւնոյն Աւետարանն ունին, միեւնոյն խաչը կը պաշտեն. թէև Առաքեալը կ'ըսէ, «իշ ամենեքեան խաչելացիք եմ», թէև Բրիստոս ըսէ, «Ո՛չ ամենեքեան որ ասեմ ցիս՝ Տէ՛ր, Տէ՛ր, մտցեն յաբայութիւն երկնից», և կ'ըսէ՝ «Ձգոյ՛ լեռնք ի խմորոյ, — յաղանդոյ, — Սաղուկեցւոցն եւ Փարիսեցւոց»:

Սոյ Շնորհազարդը այս ամենուն չանձնառու կ'ըլլայ՝ եղբերական պարտազանցութեամբ մը, բաւական է որ անոնք և իրենք, էջմիածնական ու Բողոքականը, համանպասակ մերժեն, ուրանան, նախատեն, ատելութեամբ ձաղկեն, հայոյն Հոռմայ Ս. Աթոռը, գերապայծառն եւ պատուելին, Սրբոյն եւ Մեծին Պետրոսի Աթոռը, Առաքելոց Գլխաւորի եւ երկնից բացողի Աթոռը, վիմահաստ և դրանց դժոխաց անյաւթելի Աթոռը, եւ անոր վրայ բազմող Պետրոսի Յաջորդը և Քրիստոսի Փոխանորդը:

Կը խոստովանի ուրեմն ինքնաբերաբար իր իսկ եղկելի վիճակը. մերժումն Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ, եւ եղբայրութիւն, միութիւն և համամտութիւն... հերետիկոսութեան մէջ:


Ահա՛ հաւատոյ դաւանութիւնը,

կամ՝ հաւատք չունենալու դաւանութիւնը. քան զի անտարբերութիւնը՝ անկրօնութիւն է, անխորականութիւնը՝ չքրիստոնէութիւն:

«ԹՈ՛ՅԼ ՏՈՒՒՔ ԶՆՈՍԱ, ԿՈՅՐՒՔ ԵՆ ԿՈՒՐԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՔ» !!

(Շարունակելի)

ԼՈՒՐՏ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻՆ ԵՆՆԻ ՄԻՒՋԻԶԱԹԼԱՐԸ



(Տկվաժի)

Թափօրըն կէշտիյի օ վասի մէյտանը վէ օրատա եան եանա տուրմուշ օլան պինէրճէ խոսթէկեանը կէօրմէք վէ կէօզ եաշարը տէօքմէքտէն քէնտինի ալմագ գապիլ տէյիլ տիր: Պին պիր եարալարլա զէվալլը վիւճուտը պէշէրի միւզմէհալլ իտէն, էօրսէլէյէն հէր աիւրլիւ խասթալըզար սայքի օրատա մէվճուտ կէօրիւլիւր: Պու պիշարէլէրին էթրափըն իհաթա էյլէմիշ պուլլնան էհալինին գալպլէրի ճիտաէն միւթէէսսիր օլտուլլը պու սըրատա գամբանալար վուրուլմաղա վէ միւճըզաթ քեար մաղարայա տօլրու կիսիլմէքտէ օլտուլլընը թէպշիր իթմէյէ պաշարլար: Վէ պու միւճիլէշէմ ալայլն աշէսթէ աշէսթէ իլէրլէտիյի վագլթ, հէր թարափտան հէրալէթլի տուալար, կէօզ եաշարը իլէ նիյազլար, եանըզ գալպլէրտէն աքս էյլէյէն լիճա վէ թէզարլուլար արչը ալայա եիւքսէլիլ վէ վալիաէթուլլաշըն շէփաթլըյա հէր շէյէ գատիր Ալլաշըն լահմէթ ու մէրհամէթի, օրատա պուլլնան իլլէթ վէ մարապլըլար իւզ զէրինէ տալէթ օլունուրտը:

Իշթէ Ամենասուրբ Հաղորդութիւն խասթալարլըն պուլլնալուլը եէրէ տալիլ օլուր: Դահանալար, լման իլէ տուա էյլէմէլէրի լիշին խասթալարա նէսայիհտէ պուլլնալըլար, վէ հապիպութը հալտէ տալի, պու զէվալլըլար, եէնի պիր ճէսարէթ իլէ, տիրի պիր լման իլէ տօլարագ, «Եա՛ Իաւիթլին օլլու Յիսուս պիզէ մէրհամէթ իլլէ» տէյէ նիտա էտէլլէր վէ 50 պին գատար ուխտաւորլար էլլէրինի կէօլլէրէ լէֆ էյլէմիշ՝ «Եա՛ հէր շէյէ գատիր Ալլաշ, խասթալարըմըզա շիփա պալիշ էյլէ՛, քէօրլէրիմիզին կէօզլէրի կէօրիւն, քէօթիւլմէլէրիմիզին ալազլարընըն պալը շէօզիւլիւն, սաղըլարըմըզ իշիթսին, աիլպիզլէրիմիզին աիլի աշըլսըն, եա՛ Լուրտ Սաաուաճաճինի իմտալըմըզա եէթիլշ» տուալարըյա թէքրար մէրհամէթի իլահիյէյէ իլթիճա

էյլէտիքէրի սրբատա, պէրիտէ Էօթէտէ պիր մէսէրրէթ ավագէլէրի իշիտիլիր, Էհալի աւրասընտա միւհիմմ պիր շէյ վագը օլտուղը սնլալըլըր: Վէ հէմտէ ճիտտէն Էօյլէ տիր, իշթէ օրատա պուլընան քէօրլէրտէն պագըլարըն կէօզլէրի ալըմըշ, քէօթրիւմլէր եաթագլարընտան գալգըմըշ տըրլար, միւհիգաթլար կէօրիւնմէյէ պաշլամըշ տըր:

Մօնքէլիէլի, Մէն—Ճէյմս սօգաղընըն 15 նիւմէրօլը խանէսինտէ օթուրան 26 եաշլարընտա մատմաղէլ Ժանն Կօթի սէքիզ ալտան պէրի էլիմ աղըրլար իշինտէ եաթմըշ վէ պօյնու օմուղընա եաբըշմըշ պար պար պաղըրըյօր իքէն, իշթէ Ամենասուրը Հաղորդութիւնըն կէշտիլի վագըթ պիրտէն տիւզէլիր այաղա գալգար վէ Ս. Հաղորդութիւնըն արգասը սըրա կիթմէյի իպթէր. ֆագաթ վիւճուտընըն Էօյլէ Թօս Թօք օլտուղը սէպէպիլլէ էլպիտէ կիլինէմէմիշ պուլուլտըղընտան Թէքրար եաթաղընտա գալմասընը իսթար իտէրլէր:

Բարիգտէ Պարպ սօգաղընըն 11 նիւմէրօլը խանէսինտէ սագին օլան 34 եաշլարընտա Բօզալի Լարիվէն աղըրլարընըն եաթաղընը Թէքր իտէր վէ Ս. Հաղորդութիւնըն արգասընտան գօշար:

Լավալ գուրպինտէ Կրանտ-մէզօն նամ մահալտէն կէլմիշ օլան իքի եաշընտաքի աւնատան տօղմա Լուիզ Պօրպօնըն կէօզլէրի աւըլըր: Պու քիւշիւք մասուլմըղազ, եագընտա պուլընան պիր գարընըն էլինտէքի խաշը ալըպ տուտագլարընա եագլաշտըրըր: Վալիտէսի սէվինճինտէն աղլար, չօճուղընը տէր աղուշ իտէր: Էհալի օնը սիւքիւթ իթտիրմէյէ մէճպուր օլուր:

Բարիգին Մօնքարնաս սօգաղընտա 26 նիւմէրօլը խանէտէ իգամէթ իտէն 33 եաշընտա վէրէմլի մատմաղէլ Բլէր Բագինէօն պիրտէն պիրէ սաղալըր, շիֆա պուլուր վէ Թէշէքքիւր տուալարընա քէնտիսի տէ իշթիրաք իտէր:

Բէրիկէօ շէհրինին Բլանթիէ սօգաղընտա սաքին օլան 20 եաշընտա մատմաղէլ իրէն Մարշու ուզուլ միւստէթտէն պէրի պաղըրսագ խասթէլիլինտէն մուզթարըպ օ-

լուպ սիւտտէն մատա պիր շէյ եէյմէյօր իքէն թափօրտան սօնրա քէնտի քէնտիսինի սաղալմըշ պուլարագ, հէր քէն իլէ պէրապէր Թաամ եէյէպիլմիշտիր:

Պուլա շէհրինտէն 29 եաշընտա վէ պէշ չօճուգ վալիտէսի Մատամ Մարի Թէքրէզ Տիւմէրն աղըր պիր մարագը տախիլիտէն շիֆա պուլմուշ տըր:

Թուլուգ Թըպպ տար իւլ ֆիւնուլըն թապիպլէրինտէն պիրինին, «հիշ պիր իշ հաբմայաճագ տէրէճէտէ մէֆուլմ տըր» տէյէ լաբօր վէրմիշ օլտուղը 25 եաշլարընտաքի Թուլուգտա Միւրէ սօգաղընտա իգամէթ իտէն Մատամ Մատլէն Լիւրիաք պաճագլարընա արիզ օլան ֆէլճ սէպէպիլլէ իքի սէնէտէն պէրի էսիր ֆիրաշ օլմագտա իքէն շիմտի րահաթճա եիւրիւլէճէք գատար էյի օլմուշ տըր:

1911 սէնէսի Մարտ 27տէ Պրապլէլտէն գաշմըշ օլան պիր տիվանէ պու գարընըն խանէսինէ կիրէրէք էլինտէքի պուշագ իլէ Թէհտիտ էյլէմիշ տիր: Տիվանէսին էլինտէն գուրթուլմագ իւմիտիլլէ գաշմըշսա տա, նիհայէթ օնուլ տայիմա քէնտիսինի թագիպ էյլէտիլինի կէօրէրէք 4 մէթրօլըպ եիւքսէք պիր եէրտէն սըշրամայա մէճպուր օլմուշ: Պու չէքտիլի գօրգու վէ տիւշտիլինտէքի սարսընթընըն եիւզիւնտէն իքի տիլլէրի թուլթուլմըշ վէ, պախուսուա, սօլ պաճաղը քեամիլլէն քէօթրիւմ օլմուշ տըր: Տօզթօրլարըն Թէտալիսինէ լաղմէն հիշ պիր էսէրի սալահ կէօրէմէյէն մատամ Մատլէն Լիւրիաք գաթիլի իւմիտ օլարագ չըգան սէնէ Հոկտեմբեր ալընտա Լուրտա կէլիր վէ հալը Թէրագգըտա պուլընան համիլլէլիլի Թուլուգա ալտէթ իթմէյէ Թաճիլ էյլէր: Օրատա վաղը համլ իթտիքտէն սօնրա էյի օլաճագ տըր իւմիտինի բէրվէրտէ իտէր իսէ տէ, հիշ պիր Թէպէտտիւլ կէօրէմէզ: Տէօրթ ալ եաթապտա գալըր վէ գօլթուգ տէյնէքլէրի վասիթասըլլա անճագ եաթաղընտան գալգըպ սլիր սէտիր իւզէրինէ կէլէպիլիր: Պու հալ Թուլուգ ուխտաւորլարընըն եօլա չըգտըղը կիւնէ գատար տէվամ էյլէր: Մաղարայա կէօթիւրիւլտիւլինտէ Ս. Հաղորդութիւն ալմագ իպթէր, «Պու սըրատա քէնտիմտէ եէնի պիր հալ

հիսս խոխորտում, սայ քի վիւճուտում ազալա-
րընտան ալըրլաճադ գատար աղըր տույրեօր-
տում վէ — պիլմէմ քի նասըլ օլտու — այաղա
գալգըպ եիւրիւմէք իսթէտիւմ վէ, համտ օլ-
տուն, եիւրիւմէպիլտիւմ տէր:

Միւսէսինտէ եարա չըգարմըլ օլան 30
եաչլարընտա Տօրտօնեալը Մատմ. Շասսան,
թափօր գէմանընտա սաղալըր վէ չիմտի հիչ
պիր աղըր էսէրի հիսս էթմէզ:

Արլ շէհրինտէն 18 եաչընտա վէ իւչիւն-
ծիւ տէրէճէտէ վէրէմի ժան Թարտիէօ իս-
մէնտէքի կէնճ Ս. Հաղորդութիւն եաթաղը-
նըն էօնիւնտէն կէչտիյի վազըթ այաղա
գալգըմըլտըր:

Սօլ գօլը հարաքէթսիգ գալմըլ օլան վէ
վիւճուտըն պիր չօք թարաֆլարընտա միւ-
թէատտիտ հարալարը պուլընան Բրասօլը 19
եաչընտա Մատմ. Յրանսուազ Մարէնկօնըն
եարալարը գաբանմըլ վէ գօլը հարաքէթէ
պաչլամըլ տըր:

Տահա հէր կիւն իչուն եէնի եէնի միւճի-
գաթլար կէօրիւմէքտէ իսէտէ, ծնլարըն թա-
րիֆ վէ թատաուտըն սօնրայա թալիգ իտէ-
րէք, չիմտիլիք. պուրայա գատար կէօթէ-
րիւն միւճիգաթլարըն սահիլիլիսէ տահա
էյի գանի օլմագ իչուն, օգոստոսըն 16սընտա
ատէտլէրի 200 է պալիլ օլան աթըպպանըն
պու միւճիգաթլար հագգընտաքի միւթալէա
վէ բարօրլարըն թէտգիգ իտէլիմ:

Շուրասընը էյիճէ պիլմէք լաղըմ տըր քի
Լուրտա կիտիպ տէ, եա մաղարայը զիյարէ-
թինտէ, եա միւճիգաթլը սուտա երգանմա-
սընտա վէ եախօս Ամենասուրբ Հաղորդու-
թիւն թափօրընտա հաղըր պուլընմասընտա
պիր լութֆը մախսուսա մաղհար օլմուշ օ-
լանլարըն գալլը միւճէրրէտլէրինէ ինանըլ-
մագ, հէր «պէն միւճիգաթա ուղարտըմ» տէ-
յէնին սէօղիւնէ իթիմատ իտիւմէզ: Պու կի-
պիլէր օրատա մէվճուտ օլան թէֆթիչ ու
թատտիգ տայիրէսինէ կէօթիւրիւր վէ էն
հաղիգ տօգթօրլարտան միւրէքքէպ պիր հէ-
յէթը մախսուսէ թարաֆընտան խասթանըն
հալը սապըզը, քէնտիսինի էվվէլճէ թէտա-
վի էյլէմիշ օլան տօգթօրլարըն բարօրլարը վէ
Լուրտը զիյարէթինտէ իթթիսապ էյլէմիշ օլ-

տուղը հալը հաղըրը մուշիքեաֆանէ թէտգիգ
վէ մուայէնէ օլունրպտա գանաաթը քեամիլէ
հասըլ օլտուգտան սօնրա, օ քիմսէնին խաս-
թալըղընըն թապիի սուրէթտէ տէյիլ իլլա
միւճիգաթլա չիֆահապ օլտուղընա գարար
վէրիլըր:

*
**

Էվվէլ էմիրտէ քիւչիւք Լուիզ Պարպօնըն
վազաասը մուայէնէ իտիլըր: Չօնուգտան 20
սանթիմէթրօ ուզաղա պիր շէքէր գօնուլուր:
Չօնուգ շէքէրի ալըր վէ աղգընա կէօթիւ-
րիւր, քիպրիթ եագարլար վէ քիպրիթտէն
չըգան ալէվին չօնուղըն կէօղիւնտէ պիր ի-
նիքաս հուսուլա կէթիւրտիլինի վէ պինաէն
ալէյի տէ ծնուն կէօղլէրինին արթըզ կէօրիւ-
յօր օլտուղընը թատտիգ իտէրլէր: Իչլէրին-
տէն պիրի տէ ժընէվլի Բրօթէսթան պիր
տօգթօր օլմագ շարթըյլա, պիր չօք թապիպ-
լէր պու չօնուղը թէքրար մուայէնէ իթ-
տիլէր:

Մատմ. Ժանն Կօթի հուզուրա կէթիւրի-
լըր: Պու գըզըն էլինտէ Մօնրէլիէ թըպպ
ֆաքիւլթէսինտէ բրօթէսթօր տօգթօր էսթօ-
րըն պիր բարօրը պուլունմագտա վէ պուրա-
բօր մէզպուրէնին տէմաղի բօթ խասթէլիլինէ
միւպթէլա օլուպ, Մարտ 29 տան պէրի ոյօ-
նը պէտէնինէ հարըլմըլ վէ հարաքէթսիգ
գալմըլ օլտուղընը թատտիգ իթմէքտէ աիւ:
Հալ պու քի չիմտի գըզըղաղ գաւմէթսիգ
եիւրիւլէպիլմէքտէ վէ հիչ պիր աղըր հիսս
իթմէտիլինի իգրար էյլէմէքտէ վէ գալպինտէ
տույտուղը մէսէրրէթի, տէվամի պիր քէյֆ-
լի թէպէսսիւմ իլէ գահիրէն տէ կէօթէրմէք-
տէ տիր: Պէօյիւք պիր միւճիգաթ հալինի
ալաճագ օլան պու վագաա բէք չօք թա-
պիպլէր թարաֆընտան ճիտտի պիր սուրէթ-
տէ թէֆթիչ օլունաճագ տըր:

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՆԻ (*)

(Շար.)

Ե. ՏԵՍԱՐԱՆ

(Այս տեսարանը ամբողջ պիտի երգուի՝)

Երգչախումբը

Օրիորդ մը, միևնա՛կ

Ողբա՛նք, արտասուե՛նք, ո՛վ ընկերք իմ հաւատարիմ,
Հեծե՛նք և հառաչե՛նք դառնակակիծ .

Դէպ ի սուրբ լեռը դարձընենք աչքերնիս ,
Ուսկից արդարք օգնութիւն կը սպասեն .

Ո՛վ արհաւիրք սոսկալի :

Հրեան կ'անճետի : Արտասուե՛ցէք իմ աչքեր ,
Երկնից տակ չէ բընաւ եղած

Աւելի ողբալի առարկայ :

Ամբողջ Երգչախումբը

Ո՛վ արհաւիրք սոսկալի :

Ուրիշ օրիորդ մը

Հերիք չէ՞ր ատելի , դժպընի յաղթողին՝

Վեհավայր Սիոնի աւրել , քանդել գեղն ու շուք ,
Եւ իր զաւակներն գերի վարել ամէն կողմ :

Ամբողջ Երգչախումբը

Ո՛վ արհաւիրք սոսկալի :

Նոյն օրիորդը

Գառնուկներ ատնուած կատաղի գայլերու ,

Մեր միակ զէնքն է մեր հառաչանք :

Ամբողջ Երգչախումբը

Ո՛վ արհաւիրք սոսկալի :

Օրիորդ մը

Օ՛ն , պատուե՛նք , թրդրկտե՛նք այս բոլոր սին զարդերն ,
Որ գլուխնիս կը պէսեն :

Ուրիշ մը

Հագնի՛նք անշուք սև ըզգեստներ ,

Յարմար այն ռոսկալի հանդէսին

Զոր անդուծ Համան մեզ կը սարքէ :

(*) Տե՛ս ԹԻՒ 443, 442 603

Ամբողջ երգչախումբը

Օ՛հ , պատուհ՛նք , բըզըքտե՛նք այս բոլոր սին զարդերն ,
Որ գլուխնիս կը պճնեն :

Օրիորդ մը

Ի՛նչ կոտորած ամէն կողմէ .
Կը ջարդեն անխընայ մանուկներ և ծերեր ,
Եւ եղբայրներ ու քոյրեր
Եւ աղջիկներ ու մայրեր :
Որդիներ հայրերնուն բազկաց մէջ
Մարմիններ դէզադէզ , անդամներ ցիր ու ցան ,
Զուրկ ու թափուր թաղումէ :
Ո՛վ Աստուած , սուրբերդ քն կեր եղած
Առիւծներու և վագրերու :

Ամենէն դեռաւթ օրիորդներէն մին

Ո՛հ դեռ այսքան փոքրատի ,
Ի՛նչ մեղքով արժանի եղեր եմ այս պատիժին :
Կեանքըս հաղիւ ըսկսած է բացուելու .
Պիտոր իյնամ իբրեւ ծաղիկ
Որ այգ մը լոկ է տեսեր :
Ո՛հ , դեռ այսքան փոքրատի ,
Ի՛նչ մեղքով արժանի եղեր եմ այս պատիժին :

Ուրիշ մը

Այլոց ոճիրներուն զոհեր թշուա՛ռ , տարաբախտ ,
Ի՛նչ օգուտ կ'ընեն մեզ այս ցաւերն աւելորդ .
Մեր հայրերը մեղան , մեր հայրերն արդ չըհան .
Անոնց մեղաց պատիժը մենք կը կըրենք :

Ամբողջ երգչախումբը

Պաշտած Աստուածնիս պատերազմի Աստուած է .
Ո՛չ , ո՛չ , ան թոյլ պիտի չը տայ
Որ անմեղն այս կերպով փողոտեն :

Օրիորդ մը, միմալ

Ո՛հ , ամբարիշտք պիտոր ըսեն
Ո՛ւր է Տէրն ամենակալ և ահեղ ,
Որուն ուժով կը պարծենար Իսրայէլ :

Ուրիշ մը

Այս Աստուածն յաղթական , նախանձաւոր ,
Երկրի՛ ժողովուրդներ , դողացէ՛ք ,
Այս Աստուածն յաղթական , նախանձաւոր ,
Երկնից կ'իշխէ միահեծան .
Ո՛չ փայլակն , ո՛չ շանթն ո՛չ որոտումն

Ձեն հնազանդիր ձեր Աստուածոց :

Ուրիշ մը

Ժըպիրհներն ան կը տապալէ :

Ուրիշ մը

Ան խոնարհներուն պաշտպան կ'ըլլայ :

Ամբողջ երգչախումբը

Պաշտած Աստուածնիս պատերազմի Աստուած է .

Ո'չ , ո'չ , ան թոյլ պիտի չը տայ

Որ անմեղն այս կերպով փողոտեն :

Երկու օրիորդ

Ո'վ Աստուած մեր , փառքով պըսակուած ,

Ո'վ Աստուած , պայծառ լոյս բզգեցած ,

Որ կը թռչիս հողմոց թեւով ,

Որուն աթոռն հրեշտակներ կը կըրեն :

Ուրիշ երկու. փոքրաքի օրիորդներ

Դուն կ'ուզես , որ փոքրիկներն , ո'վ Աստուած ,

Ըզքեզ դրուատեն միշտ անոնց հետ :

Ամբողջ երգչախումբը

Տե'ս վերահաս վըտանգնիս ,

Եւ անունիդ տուր յաղթութիւն :

Մի' հանդուրժեր որ փառքըդ , Տե'ր ,

Օտարութի դից անցնի :

Օրիորդ մը, միմակ

Ձէնքդ տ'ա մեղի պաշտպան եղիր ,

Իջի'ր , երեւցիր , ինչպէս ծովուն երեւցար .

Թո'ղ աշօր ամբարիշտներն ուսանին

Բարկութենէդ զարհուրիլ .

Ըլլա'ն հանգունատիպ թեթեւ յարդին , փոշիին ,

Զոր կը տանի հովն առջեւէն :

Ամբողջ երգչախումբը

Տե'ս վերահաս վառնգնիս ,

Եւ անունիդ տո'ւր յաղթութիւն ,

Մի' հանդուրժեր որ փառքըդ , Տե'ր ,

Օտարութի դից անցնի :

ՎԵՐՋ Ա. ԱՐԱՐՈՒԱԾԻ

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՅՈՅՑ

Սեպտեմբեր 28 ժ Կիր. զկ. Գ. զկնի խաչին վարագալ

29 Բշ. դժ. Խաչի Դունեցումն եւ Եւ-
դամբեսի եւ Եւդամբեսի-
ւոյ:

30 Գշ. դկ. Եւստափեսի եւն.:

Հոկտեմբեր 1 Դշ. աժ. Պափոց:

2 Եշ. սկ. Խաչանացի Սահակայ եւ
Համակասպայ:

3 Ուր. դժ. Պափոց

4 Եր. թկ. Եօթանասուն եւ երկու ա-
ւակեցեսցն Քրիստոսի:

ՍՈՒՐԵ ԱԼՓՈՆՅՈՍ ԼԻԳՈՒՈՐԻ

ՏՈՇԸ 2 ՊՁԱՍՏԱՍ

(Շար.)

Ալփոնսոս շարունակ ի գործ դրաւ, իր հազուած-
քին, իր բնակարանին կոհուածքին եւ իր ապրելակեր-
պին մէջ այն խիստ աղքատութիւնը, որով նշանաւոր
հանգիստացեր էր Միաբանութեան մէջ: Եպիսկոպոսու-
թեան ժամանակ գործածած սուրբ անօթները աղ-
քատին էին: Աղքատներու կու տար ունեցած քիչ մը
գրամը. եղբորը իրեն տուած կառքը եւ երկու ջորի-
ներն ալ նոյնպէս ծախեց եւ դրամը աղքատաց բաշ-
խեց: Առաջնան պէս յարգասիրտին վրայ կը պառ-
կէր: Շատ անգամ այնչափ ողորմութիւն կու տար որ
իրեն համար ամենափոքր ծախք մը անգամ ընելու
անկարողութեան մէջ կ'ընար: Իր կերակուրը ամե-
նախաւարակ էր: Իր ծառաները քիչ էին, որոնց հետ,
ամէն պարզապէս մէջ, անեղածմով անուշութեամբ
եւ հեղուօքով կը վարուէր: Հետզհետեւ կ'աւելցնէր իր
մահացուցումները եւ կը ստուկացնէր: Սրն ի բուն իր
թեմին գործերով զբաղելէ յետոյ գեշերուան մէկ մա-
սը աղօթքով կ'անցընէր:

Ինչ հովուական պաշտօնին պարտքերը կատարելու
մէջ, Ս. Կարոլոս Պորթմանի անթերի հետեւող հան-
գիստացաւ. իր երեքտասնամեայ եպիսկոպոսութեան
մըջոյցին, երբէք բացակայ չէրու իր թեմէն, նոյն իսկ
երեք ամիսը շափ, ինչպէս կը թոյլատէ Տէրտէրեան
ժողովը: Փոյլով տարաւ բարձրը վերանորոգելու, եւ
բարեպաշտական նոր ոգի մը ներշնչելու իր ամբողջ
թեմին մէջ: Թեմական այցելութիւնը սկսելէ առաջ,
Ժողովուրդին հետ բնօրեայ մը կ'ընէր, իր ջանքերուն
վրայ երկնից օրհնութիւնները հրաւիրելու համար:
Այցելութեան միջոցին իրեն դիմողներուն խոստովա-
նանքը կը լսէր, եւ Ժողովրդեան կը քաջուէր: Սիւն
անդրաշտ հիւանդներ ըլլալին, կը փութար կ'երթար
անոնց տան մէջ խորհուրդ կը մատակարարէր սիրտ

չդնելով օդին գեշութեան, ճամբաներու անհարթու-
թեան եւ առջեւը կլիկիք ամէն տեսակ գոհաւորու-
թեանց:

Ս. Եպիսկոպոսին եռանդին ու խնամքին միակ ա-
ւարկան էր իր հօտին հազուոր հրահանգումը եւ դար-
գացումը: Եկեղեցիներ շինեց եւ նորոգեց եւ նոր ժողո-
վորդապետութիւններ կազմեց. ներմուծեց գովելի
սովորութիւնը Զարչարանաց կամ ուրիշ պատշաճ
նիւթի մը զոյս մտածական մը առաջարկելու ամէն
առտու. առաջին պատարագին մէջ. հրամայեց որ ա-
մէն իրիկուն Ս. Խորհուրդը թ. ցոյց գրուի եւ եռան-
դագին աղօթքներ ըսուին ի պատիւ Յիսուսի որ հոն
ներկայ: Եւ շաբաթ օրերը անպատճառ ներքաղ մը
կ'ըսէր Ս. Կոյսի վրայ, որպէս զի ամէն արտեր անոր սի-
րով ու ջերմեան գոլթեամբ բռնկին: Իր թեմին մէջ
Յղարարացութիւններ հաստատեց, որպէս զի հաւա-
տացեալները մղէ սուէպ Ս. Խորհուրդներուն մերձե-
նաւու եւ Աստուծոյ խօսքը լսելու փութալու: Ինք
յաճախ կը խօսէր ասոնց համարժեքութեանց մէջ, ի-
րիկուն մը երբ կը թուրեման մը միջոցին, Արեւիժոյի
արանց Եղարարացութեան կը քարոզէր, Ս. Կոյ-
սին պաշտպանութեան վրայ, յանկարծ յափշտակուե-
ցաւ: Ի՞նչքա՞ն փայլեցաւ այնպիսի պայծառութեամբ
որ ամբողջ եկեղեցին անսովոր լոյսով լցուեցաւ, եւ ա-
ղաղակեց. Տեսէ՛ք ի՛նչպէս Ս. Կոյսը մեզի լուսնի բաշ-
խելու կու գայ: Խնդրե՛մք իրմէ եւ մեր ամէն ուղած-
ները պիտի բնորոշենք:

Ալփոնսոս երբ թեմական գործերուն ձեռք դարաւ,
որոնց այնպէս մատակարարել անոր եկամուտները,
որ իր սնունդին եւ ուրիշ անհրաժեշտ ծախքերու հա-
մար պէտք եղած փոքր գումարէ մը դատ փնտցածը
ամբողջ աղքատներուն տրուէր: Այդ նպատակաւ ինք
իրեն յատկացուց լոկ իր հօրմէն ժառանգած եկա-
մունտները, մնացածները աղքատաց տուաւ: Չէր կըր-
նար հանգուրժել որ մէկը իր քովէն. Գեօրգի մեկնի:
Իր մատակարարին հրամայեց որ ամէն շաբաթ իր
պարտանքի դրան առջեւ հոց եւ դրամ բաշխէ ամէն
ներկայացողներու: Բայց այս հրապարակական ողոր-
մութիւններով չաւտանալով կը ստիպէր իր քահանա-
ները, որ իրեն տան ճիշդ ցուցակը այն անձերու ու
րոնք խեղճութեան մէջ կը գտնուէին բայց ողորմու-
թիւն ուղեղու կ'ամշնան: Այսպիսիներուն ամսաթո-
շակ կը կապէր կամ նպաստներ կը զրկէր: Յատկապէս
փնտռել գտնել կու տար այն քահանաները որ պա-
տարագ ըսելու անկարող էին, կամ յետին աղքատու-
թեան մէջ կը գտնուէին. ինչպէս նաեւ աշխատելու
անկարող հիւանդները եւ ծերերը, զուաւորներու տէր
այրերները, ծնողաւորի որբերը, անոնց նպաստելու
համար: Մէկ խօսքով, ամէն դատարարի կարօտները
իր ողորմութեան եւ գթութեան տաւարկոյ էին: Յա-
տուէ խնամք ցոյց կու տար աղքատ օրիորդներու, ա-
նոնց ամէն պէտքերը կը հոգար, եւ երբ ամուսնանա-
լին անոնց օժիտը կու տար եւ տուններին կը կահա-

ւորէր, բանտարկեալներուն դրամ կը զրկէր, անոնց ընտանեաց կ'օգնէր կամ զանոնք բանտէն կ'ազատէր, իրենց պարտատեարց հետ համաձայնելով: Այս ուղորմութիւնները այնպիսի աղքատութեան կը մատնէին զինքը որ յաճախ կը ստիպուէր պարտք ընել իր սեղանին ծախքերը վճարելու համար:

Բայց 1764ին, Իտալիոյ մեծ սովին ժամանակ ըրածներուն քով ասոնք ոչինչ են: Մախեց իր կառքը և իր ջորիները, չինայեց նոյն իսկ իր հովուական մատանին և սակի գաւազանին. կերակուրը իջեցուց քիչ մը ապուրի և հացի. և քիչ ատենէն ամէն բանէ զուրկ գտնուեցաւ:

(Շարունակելի)

ՀԱՅԵՆԻՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԲԷՆ

Գլխի Ա.—Գլ. ԺԴ.—Փարձուքիւններու դէմ կենալու վրայ (Շար.)

Ուստի պէտք չէ որ յուսահատեմք երբ փորձութեան կ'ենթարկուինք, այլ աւելի եռանդեամբ պաշտօնէն եմք Աստուծոյ, որպէս զի հաճի օգնել մեզի ամեն նեղութեան մէջ, որ իրացնէ, ըստ բանի Պօղոսի, այնպիսի էջ մը պիտի օայ փորձութեան հետ, որ կարենանք համարձեռնութեամբ տանել:

Ուրեմն մեր հոգիները Աստուծոյ մեռիմք ակ խնայողութեամբ ամեն փորձութեան ու նեղութեան մէջ, որովհետեւ հոգւով խնայողութեան պիտի փրկուինք յաւերճութեան:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ձանազան հարցեր (*)

Առ 2.— Կարելի որ Կաթողիկէից բարի ձեռնարկները վնասուին Բողոքականաց փոխադարձ ձեռնպահութենէն: Ո՞ր չարիքը մեծ է, մեր ժամանակաւոր թշուառութեանց նուազ ամոքումը, թէ մեր Կաթողիկէ հաւատքին և մաքուր բարոյականին վտանգումը:

Տարօրինակ հաշիւ. Բողոքականք մեզի կու տան, մենք բողոքականաց կու տանք: Եւ մեզի կ'ըսեն. Եթէ մենք անոնց չտանք, անոնք մեզի պիտի չտան: Բայց եթէ մենք, չտանք, չտուածնիս մեր տրամադրութեան

տակ կ'ունենանք, և այսպէսով անոնց չտալիքին տեղը կը լեցուի և հաւասարակշռութիւնը կը պահուի: Ո՞ւր է վնասը, ո՞ւր է կորուստը:

Ճշմարտութիւնը սա է որ մենք ստուգիւ կը զրկուինք Բողոքականաց ընկերակցութեան, և այս է բոլորը, կամ գրեթէ բոլորը: Դրամական տեսակէտով «Տուր որ տամ» դրութիւնը համակշռութեան կը յանդի, բայց ինչ որ բողոքողք մեզի կու տան, իրենց զրամէն զատ, երբ մեր քովը գան կամ երբ մենք իրենց քով ելլանք, իրենց բողոքական հոտն է, որ իրենցմէ անբաժան է, և իրենց մօտ գացողին կ'անցնի: Բայց այս խառն հաղորդակցութիւններէն լոկ այդ բողոքական հոտը չէ որ կ'առնունք, այլ սպաւորութիւն մը զգալի, խորունկ, զոր կաթողիկէ հոգւոյն կ'ազդէ ճշմարտութեան և մոլորութեան յարադրութիւնը, պաշտօնական հանդիպման մը հրապուրիչ տեսարանին մէջ, ուր ամէն ընդդիմութիւն անհետ կ'ըլլայ, ուր միշտ կաթողիկէութիւնը չէ ամենաշաւալ Կատարողը, և ունկից հաւատացեալը կը դառնայ ըմբռնուած սա գրգռիչ հարցով, զոր իր մօքին առջեւ կը դնեն այս երկու ներհակ սկզբունքները. դադարաւորութեան մէջ պատերազմ անհաշտ, անտեղիտալի, իսկ գործնական հողի վրայ անձերու և իրերու հաշտ և անձուկ յարաբերութիւն: Սակայն խաղաղութեան հրապոյնները պատերազմի բիրտ խտութիւններէն աւելի առինքնիչ են... Ամէն պարագայի մէջ խաղաղ յարաբերութիւնները աւելի հաճելի կու գան... Մնացածը կը գուշակուի: Այդ պարագայը բողոքականք թո՛ղ իրենց պահեն: Մենք չենք ուզեր: Մեզի համար արժէք չունի այդ չենք ուզեր:

Առ 3.— Եւ յետո՞յ: Անհանդուրժող, ծայրայեղ, մոլեռանդ, տամարդի պիտի համարուինք... Անշուշտ: Եւ յետո՞յ: Այս բանիս մէջ ի՞նչ վնաս կայ: Մարդկային և բնական նուազ համակրելի գնահատութեան մը տարակայ պիտի ըլլանք... Ստո՛յգ է... այս Կաթողիկէներուն հետ գործ չի տեսնուիր... Ստո՛յգ է: Նօսմ հակառակութեան, ստոյգ

է: Հերանոսաց յիմարութիւն, Հրէից զայ-
րակլութիւն ստոյգ է... եւ յետոյ:

Քննող սա պիտի պատահի, 1. որ աւելի
որոշ գաղափար մը պիտի կազմուի մեր հա-
ւատքին և բարոյական վարդապետութեան
բացարձակ ճշմարտութեան մասին, երբ պիտո-
ցուի թէ ան, մեր քով, զերծ է բոլորով ա-
զատամտութեան յատկանիշը եղող առաձգա-
կանութիւններէն, որոնք միայն տարակոյսին
և մոլորութեան հանգամանքներն են, եւ ոչ
կրկէք ճշմարտութեան եւ ստուգութեան: 2.
պիտի տեսնուի թէ մենք անկեղծ ենք, ող-
ջաբոյ, հաւատարիմ. յատկութիւններ, որ
այլապէս և լաւ եւս գնահատելու կը հար-
կադրեն, քան մարդկային ճարտարութիւնները
որոնց մէջ յաւէտ կ'իշխէ՝ կաթողիկէ հա-
ւատքին և ճշմարտութեան խստութիւնները
վտանգաբեր պայմանադրութիւններու հա-
մակերպելու արուեստը: 3. պիտի հիմնան
մեր վրայ տեսնելով որ մեր ժամանակաւոր,
գրամական և ուրիշ շահերը, նոյն իսկ ըստ
ինքեան ամէնէն օրինաւորները, յօժարակամ
կը զոհենք մեր վարդապետական և բարո-
յական ճշմարտութիւնները անարատ պահե-
լու համար—լաւ է մեռանել քան ապականիլ
— Որչափ հիացումի արժանացաւ Ֆրանսայի
կղերը, որ 1906ին փրկեց իր նուիրապետու-
կան հաւատքին արժանապատուութիւնը՝ ա-
հաւոր զոհողութեանց գնով:

Բայց, և մանաւանդ, 4. Կաթողիկէները
աւելի հաստատապէս և ջերմօրէն կաթողիկէ,
եւ կրօնական-ազատամտական յարաբերու-
թիւններու թոյնէն զերծ կեանք մը կ'ունե-
նան, որ մեծ բարիք մըն է: Ի՞նչ փոյթ,
վերջապէս, թէ ի՞նչ կը մտածեն կամ չեն
մտածեր Աստուծոյ և եկեղեցւոյ թշնամիներ-
ը. եթէ մենք Աստուծոյ և եկեղեցւոյ հա-
ճոյքին համեմատ մտածելնուս և գործելնուս
գիտակցութիւնը և սիոփանքը ունինք: Հա-
ւատքի և շնորհքի զմեզ կոչած ճամբուն մէջ
հանգիստ ըլլալու համար մի ատենէն սկսեալ
կարօտ եղեր ենք մեր հակառակորդներուն հա-
ճութեան, հաւանութեան:

Արդարեւ շատ անտեղի է նաեւ այն ստոր-
տանքը որ մեզի կ'ուղղեն իբրեւ թէ մենք

կ'եղծանենք աւետարանական սիրոյ տեսա-
կանը՝ անհանդուրժողութեան զիմակին տակ
ծածկելով անոր քողջրաժպիտ դէմքը, դա-
ւանական ուղղափառութեան լիրա խճմուռ-
թեամբ արգելք դնելով անոր բարի սրտին
մշտաբուդիս զեղումներուն...

Դրո՞հե՞ց ուրեմն աստուածային սուրբ սի-
րոյն դէմ Այն, որ խարաղանի հարուածնե-
րով վռնտեց տաճարին մէջ առուտուր ընող-
ները: Այն՝ որ խօսքով ու գործով այնքան
ուժգնօրէն արգիլեց Փարիսեցւոյ հետ հա-
ղորդակցութիւնը: Այն՝ որ զժոխքի յաւի-
տեանկան կրակին դատաւարուեց իրեն պէս
չմտածողները, իր օրէնքին մէկ յօդուածն իսկ
արհամարհողները:

Ի՞նչ յիմարական և ծաղրական է այդ
ցնորական սէրը, որ գեր ի վերոյ՝ ամէն
ճշմարտութենէ, ամէն գործէ, ամէն մարդ-
կային վարմունքէ, ինք միայն՝ ամէն ա-
ռաքինութիւններու տեղը կը բռնէ, ըստ
արժանւոյն. և ամէն մոլորութիւնները իր
բանաստեղծութեան ցոլքերուն կամ շուքե-
րուն ետեւը կը պատսպարէ:

Մէկ խօսքով այս ամէնը լուսաբանենք:
Մարդս, անհուն Աստուծոյ պէս, որմէ ստեղ-
ծուած է, իմացականութիւն է և կամք, ճա-
նաչում և սէր: Եւ ինչ ճանաչում, ապա սէր:
Սիրոյ, ինչպէս ամէն մարդկային գործի,
կանոնը գաղափարին մէջն է, որ առարկան
կը ներկայացնէ և անոր սիրելիութիւնը կը
չափէ: Ուստի կայ սէր որ պատիր է և ան-
կարգ, իմացականութեան կանոնին ներհակ,
ինչպէս կայ ընդհակառակն սէր որ կանոնա-
ւոր է: Աւետարանական սիրոյ վրայ խօսիլ
առանց զանազանութեան, խառնել է եր-
կուքը, ճշմարիտն ու սուտը՝ միեւնոյն երկ-
դիմի յորջորջումով, և ներկայացնել երկուքն
ալ, բարին ու յոռին, միամիտ ամբոխներու
հիացման, որոնք քնականօրէն աւելի տրա-
մադիր են գնահատելու յորդառատ սիրոյ շօ-
չափելի արտազեղումները քան մաքրութիւ-
նը ակերուն որոնցմէ կը բխի:

Թշնամին սիրելը երկու կերպով կը հաս-
կըցուի. ըստ որում անձ և ըստ որում օսոյսի
յատկանիշը կրող: Աւետարանը կ'ըսէ թէ

պէտք է սիրել թշնամին առաջին կերպով . իսկ երկրորդ կերպով սիրելը կ'արգելէ : Սիրոյ օրէնքը կը տրամադրէ թէ՛ ինքզինքը օրինաւորապէս պաշտպանել անիրաւ յարձակումներու դէմ, և թէ խաղաղօրէն հաղորդակցել հոն՝ ուր տեղի չունի կռիւի կէտը, որ սէրն ու անոր առարկան սպառնալից և կազող հակասութեան մէջ կը դնէ :

Բողոքողները, անհատօրէն, և ուր որ իրենց հանդիպումը մեղի քննարկար և վրտանդարեր չէ, կը սիրենք աւետարանական սիրով : Բողոքողները չենք սիրեր, չենք կրնար սիրել, կ'ատենք, անոր դէմ կը պատերազմինք, և, նոյն իսկ սիրոյ օրէնքով, զայն ջնջելու ամէն օրինաւոր միջոց ձեռք կ'առնուինք :

Հիմայ ուղղորդ կրնայ զարմանալ թէ ինչո՞ւ յո՛ւ յանձն չենք առնուր մեր սէրը արտայայտել հոն՝ ուր բողոքողները և բողոքողութիւնը գտնուել կը հրաւիրեն խաղաղօրէն ողջագոտրուելու : Այդ սէրը, նոյն իսկ Աստուծոյ կողմէ, խստիւ արգիւտած է մեզի : Մեր սէրը՝ նախ կաթողիկէներու և կաթողիկէութեան, մեր անանկ եղբայրներուն, ապա ուրիշներու, բողոքողներու՝ անհատօրէն . իսկ բողոքողութեան, մօտէն կամ հեռուէն, ընկերական ձեռնարկներու մէջ, ուր ան կը հաստատուի հրապարակաւ, ո՛չ երբեք : Բողոքողները և ազատամիտները կրնան խորհիլ կամ խօսիլ ինչ որ ուզեն : Մեր վարձուներին կանոնը իրենցմէ պիտի չառնուինք :

(Շարունակելի)

ԳԱԹՈՒԻՐ ՄԵՉԼԵՊԻ ԷՍՍՍԼԱՐԸ (*)

(Տեկամի)

Քիւրրէյի արզըն պիւճիւմէ ազվամը գուտրէթի իւսիյէնին վարըղընը գապուլ իթմըշտիւրէր, գուրպանլար, տուա, վէ միւնահաթլար պուռնա շահիտ աիւրէր : Եյ'ը ինսանա միւթէալլիգ խուսուսաթլա ճէնապը

Հազգըն մէշղուլ օլտուղընա իթիգատ իտիւմէմիշ օլսայտը, ֆէլաքէթ զէմանլարընտա տուալար վէ նիյաղլարլա ծնա միւրաճաաթ էթմէյէ նէ՛ հաճէթ գալըրտը :

Պու հազիգաթ մէյտանտա իքէն, թէսատիւֆտէն պահա իթմէք սըրֆ ճէհալէթ տիր : Հիշ պիր շէյ եալընըղ քէնտի պաշընա վար օլմուշ օլմատըղընտան, հիշ պիր շէյ տէ եալընըղ քէնտի պաշընա իլէրիլէյէմէզ : Հէր շէյի թէսատիւֆէ վէ եախօտ գալմանիյնի թապիթա համլ իթմէք վէ Ալլահ պիզիմ իլէ մէշղուլ օլմաղ իտտասընտա պուլընիազ, հազգի Ալլահըն վարըղընը ինքեար իթմէքտէն պաշգա պիր շէյ տէմէք տէյիլ տիր : Պու հազիգաթըն ինքեարը տախի Ալլահը ինքեար իթմէքտէ օլան մուխարրիպ նէթայիճի իլէլլիտ իտէր :

— Լաֆլն, աճհպա Աղան հէր շէյի ֆենսի գուտրէթի իրանիյէնիյի նաւըլ իսարի իսկր :

— Ալէստէվիյէ Ալլահ իֆինճի russkեֆի սեպկալիէր եանի քէնտիւնին վազ իթմիշ օլտուղը գանուլար վասիթասըլա իլլէր : Ազըլտան պի պէհրէ օլան մախլուգաթը, տէյիլ չիլմիշ օլան գալմանիյնի քապիիյի վասիթասը իլէ իտարէ էյլէր, վէ պու թապիթ գանուլարտան, վէլէվ պազը քէրրէ խուսուսի պիր ատէմը ինթիգամ պիլէ հասըլ օլսա, ճէնապը Հազգ աղըր պիր սէպէպ օլմատըգճա ինհիրաֆ էյլէմէզ : — Սահիպի իտրաք ու իրատէթի ճիւղիյէ օլան մախլուգաթը եանի ինսանլարը գալմանիյնի մանէվիյի վասիթասիյլա իտարէ էյլէր, օ գանուլարը մուհաֆազա էթմէք վազիֆէսիյլէ ծնարը միւքէլլէֆ պըլար, լաքին պու վազիյֆէնին իճրասընա իճպար իթմէյիպ, ծնարըլլէլլէրինտէ մուխթար պրապըր :

Ազըլտան մահըում օլան մախլուգաթ պուսուրէթլէ, մութլազա քէնտի, խուսուսի զայէլէրինէ, վէ ծնունլա տա Ալլահըն շէրէֆիտէն իպարէթ օլան խիլգաթըն զայէյի ումուսիյէսինէ վասըլ օլուրլար : Ալլահըն վազ էյլէմիշ օլտուղը վէ իտարէ էյլէտիյի վասնունլարա թէպաէն շէմա հէր կիւն պիզի թէ՛ վիլէր էտէր, արղ պիզի լւզէրին տէ կէօ :

Թիւրիւր, աթէշ պիզի ըսնտորըր, սու սէ-
րինլէնտիրիւր, հէր վիւճուտ, հէր ըիւքն գա-
յիմ օլուր վէ վազիւր Ալլահ օլան սապիթ
դանունլար, ահքեմընճա հարաքէթ էյ-
լէր:

Ալլահ ինսանա գալանիյնի մանէվիյի վազ
էյլէմիշ տիր, վէ պու զանունլարըն մուհա-
ֆազասը ինսանը, սելամիքի հպիսիյէսէն ի-
պարէթ օլան դայէյի մախսուսէսինին վէ Ալ-
լահին շէրէֆինտէն քինայէ պուլընան խիլ-
զաթլըն դայէյի ումուլիյէսինին իսթիսալընա
իրյաու էյլէր: Ինսան հէր, նէ տէ եափա, Ալլահըն
շէրէֆինէ խատիմ օլուր, ֆազաթ
հէր վազըթ սէլամէթէ վասըլ օլամազ, չիւն-
քի Ալլահ օնը խայր վէ եա շէրը խուսու-
սինտա սէրպէսթ պրազըր: Ճէնապը իսալիգ
հաղլէթլէրի հէր ինսանա, սէլամէթէ վասըլ
օլապլիլէճէք վասիթալարը վէրիւր, վէ ինսան-
լար սէլամէթէ էրմէլլէրսէ, գապահաթ քէն-
տիլէրին տիր:— Ինտուլլահ էպէտի շէլլէր,
մուվազգաթ օլանլարա միւրէճճահ սըրլար,
մէսէլա սալիհ օլան քիմսէյի պու տիւնեսու-
տա միւքեաֆաթլամազաս, տարը ախրէթտէ
միւքեաֆաթլար:

(Մապասի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Ե Ա Շ Խ Ա Ր Հ

Իտալիոյ կաթողիկէ երիտասարդներէն հազարա-
ւոր հոգիներ թափորով գացին Ս. Իսմայիլի բակը.
առջևնէն կ'երթար իրենց խաչադրօշը Ս. Սրտի թե-
մին նուագախումբը կը հնչեցնէր քահանայապետա-
կան երգը:

Երբ Ս. Հայրը պատշգամէն երեցաւ, խանդա-
վառ ծափերով ողջունուեցաւ:

Յետոյ գացին Դիւանատան բակը, ուր ալիււալլ
բանախօսութիւններ աեղի ունեցան: Փաստարան
Սիմն իր բանախօսութեան մէջ ցոյց տուաւ Բրիտ-
տոյ լիւրջ կեանքի հարցին լուծումը: Բոլոր բանա-
խօսները եւանդագին ծափահարուեցան: Երեկոյթը
փակուեցաւ երեք կեցցէով: Կեցցէ՝ Յիսուս, կեցցէ՝
Պիոս Ժ., կեցցէ՝ Իտալիոյ կաթողիկէ երիտասարդու-
րիւնը:

Իտալիոյ Երկրպագու քահանայից համաժո-
ղովը դուժմարուեցաւ Լատերանի Մայր Եկեղեցւոյն
մէջ: Ներկայ էին հինգ կարգինալ, 40 եպիսկոպոս,

2080 քահանայ, առանց հաշուելու Հռոմ քաղքին
քահանաները: Համաժողովականները երեք պատկա-
ռազգու նիստեր ունեցան, որոնց մէջ Ս. Խորհուրդին
մասին եւանդալից բանախօսութիւններ արտասան-
ուեցան և զանազան բարեպաշտական հրահանգներ
որոշուեցան:

Համաժողովը փակուեցաւ Ս. Պետրոսի մէջ Ս.
Հաղորդութեան օրհնութեամբ:

Ս. Հայրը հաճեցաւ ընդունիլ և օրհնել ամբողջ
համաժողովականները:

ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ

Զմառեան Միաբանութիւնը Ս. Գահէն հա-
տատուած է Պիոս Ժ. 1908 Փետր. 3 թուակիր քա-
հանայապետական վճռագրով, որ ժամանակուան Կ.
Պատրիարքին հաղորդուեցաւ Տարածման հաւատոյ
Ս. Ժողովին կողմէ:

Նոյն Ս. Ժողովը իր 1913 Սեպտ. 13 թուակիր
պաշտօնագրով կը ծանուցանէ Զմառեան Միաբա-
նութեան ներկայ Ընդհ. Մեծաւորին, Ամեն. Գերեթ.
Պողոս-Պետրոս Ժ. Թէրզեան Կ. Պատրիարքին թէ՛
Ս. Հայրը հաճեր է նոյն Միաբանութեան Կանոնա-
գիրը իր Առաքելական Իշխանութեամբ հաստատել:

Այս առթիւ Զմառեան Արհի. Արհի. և Գեր.
Գեր. Միաբանից յայտնելով մեր սրտագին շնորհաւո-
րութիւնները կը մաղթենք որ այս բարենշան դէպ-
քը նոյն արդիւնաշատ և դարաւոր Միաբանութեան
համար յառաջդիմութեան և բարգաւաճման նոր
դարազուլուս մը կազմէ:

Է Զ Մ Ի Ա Մ Ն Ա Կ Ա Ն Հ Ա Յ Ե Ր

Պատրիարքարան հասած հեռագրի մը համեմատ
նորրնտիր Պատրիարք Զաւէն Սրբազան Տիգրանակեր-
տէն Սեպտ. 25ին ճամբայ ելեր է Պոլիս գալու համար:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Մ Ե Ր

Հաշտութեան ժողովին Տրդ. նիստը աեղի ունե-
ցաւ Սեպտ. 18ին:

Ահաւասիկ այս մասին մամուլին հաղորդուած
պաշտօնական գեկոյցը:

Պատուիրակները այսօրուան նիստին մէջ ստուա-
գրեցին երկու երկիրներու միջեւ վերջնապէս որոշուած
սահմանադրական վերաբերեալ բրոքօֆը, եւ հպատա-
կութեանց, ժողովրդային իրաւանց, իսլամական հա-
մայնեմերու եւն. վերաբերեալ խնդիրները բնեղով կար-
գադրեցին:

Կարգ մը երկրորդական խնդիրներու բնութեանց
համար յանձնաժողով մը կազմուեցաւ. առաջիկայ
նիստը տեղի պիտի ունենայ Բե.:

Հաշտութեան ժողովը Սեպտ. 22ին իր յոգ. նի-
ստը գումարեց: Կէսօրէն առաջ օտմ. պատուիրակները
արտաքին գործող պաշտօնատան ժողովարահին մէջ
խորհրդակցելէ ետք, Կատրքոսին մօտ գացին և իրենց
խորհրդակցութեանց արդիւնքը հաղորդեցին: Յետոյ
գարձեալ ժողովարահ գարձան և պուլկար պատ-

ուերակներուն ժամանման սպասեցին: Այս վերջինները ժամը 3ին մօտ Բ. Դուռ եկան և սովորական արարողութիւններով ընդունուելէ ետք ժողովարար՝ առաջնորդուեցան: Թալէադ պէյ ժամը 3ին բացուած հաշակեց ժողովը, որուն խորհրդակցութեանց մասին հետեւեալ պաշտօնական գեկոյցը հաղորդուեցաւ:

Այսօրուան նիստին մէջ հաւանութեան ժողովը բն-նեց եւ որոշեց դաւանագրին այն յօդուածներ որ կը վերաբերին սահմանազուխներուն, լսանկներու ցը-ւաւմին, ընդհ. ներումի, հպատակութեանց, համայնե-րու իրաւանց, մասնաւորներու բնակութեան, սեփա-կանութեան իրաւունքի, դիւանագիտական յարաբե-րեանց, թղթատարութեան եւ հեռագրութեան եւ երկա-թուղիներու խնդրոց: Պաշտօնագրին միւս յօդուածներուն բնութիւնը հաւանաբար կը վերջանայ առաջիկայ նի-ստին մէջ, որ տեղի պիտի ունենայ Դե.:

• Հաշտութեան ժողովին Է. նիստը տեղի ու-նեցաւ Սեպտ. 24ին և լուծեց օրակարգին վրայ դրա-նուող խնդիրներուն մեծ մասը:

• Հաւաստի աղբիւրէ կը հաղորդուի թէ հաշ-տութեան դաշնագիրը պիտի ունենայ 20—25 յօդ-ուածներ: Գլխաւոր 10 յօդուածները խմբագրուեցան և ընդունուեցան: Միւս յօդուածները պիտի քննուին երկու կողմի պատուիրակութեանց խորհրդակցութեան մասնաւոր գումարման մէջ: Բանակներու ցրուումին վերաբերեալ յօդուածը կը արամադուի որ հաշտութեան գաշնագիրը ստորագրուելուն պէս երկու կողմերը պի-տի ցրուեն իրենց բանակները:

• Թուրք թերթ մը հաշտութեան ժողովին ա-ռաջին 40 յօդուածներուն գլխաւոր զիծերը հրատա-րակած է, որ ահաւասիկ:

Ա. Յօդուածը կը յիշէ Սուլթանին և Պաշկարիոյ թաղաւորին պատուիրակներուն գումարումը, տեսա-կան և հաստատուն հիմերու վրայ հաշտութեան կըն-քելու համար:

Բ. Յօդուածը կը յիշատակէ Թուրքիոյ և Պաշկա-րիոյ սահմանագրութիւնը, որուն մանրամասնութիւնները արդէն հրատարակած ենք:

Գ. Յօդուածը կը վերաբերի հպատակութեանց խնդրոցին: Պաշկարիոյ թողուած երկիրներու իսլամ բնակիչները չորս տարուան պայմանաժամ մը կ'ունե-նան սօմ. կամ պաշկար հպատակութիւնը ընդունելու համար: Սօմ. հպատակութիւնը ընդունողները ազատ պիտի ըլլան չորս տարի ետք Թուրքիա դառնալու: Ասկէ զատ այդ չորս տարուան շրջանին մէջ ղենու-րական ծառայութեան ղերծ պիտի ըլլան: Իրենց հը-պատակութիւնը փոխեն թէ ոչ, պաշկար կառավա-րութիւնը պիտի չկրնայ ղենքի տակ կոչել զանոնք:

Դ. Յօդուածը կը վերաբերի պաշկարաբնակ իս-լամ համայնքներու քաղաքային իրաւանց: Իսլամ ժողովուրդը և համայնքները Պաշկարներուն ունեցած քաղաքական և քաղաքային բոլոր իրաւունքները պիտի վայելեն:

Ե. Յօդուածը կը կարգադրէ գերիներու փոխա-նակման խնդիրը...

Ձ. Յօդուածը կը նախատեսէ ընդհանուր ներում՝ Պաշկարիոյ անցած նահանգներուն բնակչաց համար:

Է. Յօդուածը կը արամադրէ որ Պաշկարիոյ իրեն թողուած երկիրները հաշտութեան գաշնագրին ստո-րագրուելէն և փոխանակուելէն երկու ամիս ետք միայն պիտի կրնայ գրաւել:

Ը. Յօդուածը կ'ըսէ թէ այս գաշնագրին արա-մագրութիւնները գործադրելի պիտի ըլլան ստորա-գրութեանց փոխանակման օրէն սկսեալ:

Թ. Յօդուածը գործադրելի կը նկատէ Լանտոնի գաշնագրին այն արամագրութիւնները, որ ներկայ գաշնագրով բարեփոխուած չեն:

Ժ. Յօդուածով Պաշկարիա 'երաշխաւորէ նախա-պէս իր գրաւած և յետոյ օսմ. Բանակին կողմէ ետ առնուած քաղաքներուն մէջ իր տուած ստացագիր-ներուն հատուցումը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	609
Լուրս Ասուածածինին եկնի միւնիզիպալար	613
Եսքեր	616
Եօքնեակ Բիստնէի	619
Եկեղեցական-գիտական խնդիրներ	620
Գաթոյի Մեդիէպի էսալար	622
Տեղեկագրական	623

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎԶ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԳՐԱԳԵՏ



ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Գ. Արմաղանց Զարքարեթի, Բերա. Պարսմ փողոցի 5, Կ. Պոլիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին
հրատարակուեցաւ ընտիր Թուղթի վրայ, մաքուր տպագրու-
թեամբ և երեք պատմական պատկերներով:

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գե-
ղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէ-
նուն Երանելի նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և,
անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ
անոր բարեխօսութեան անգուգական արդիւնքները:

Գիւն 5 դահեկան, էջ 144 ամուռ քոթրակազմ

Գրքոյկիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանա-
յական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առ-
ջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գը-
նողներու, գոհացուցիչ գեղջ:

ԿԸ ԾԱՌՈՒԻ «Տարրական Սկզբունք Քրիստոնէական Վար-
դապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ
կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ա-
մուր թղթակազմը 2 դհկն.:

ԲԱԺԱՆՈՒԹԻՒՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիայ համար, արեւելան՝ 40 դիկ. արծ. վեցամսեա՝ 20.—
մէկ թիւ՝ 1 դիկ.:— Արաստահման՝ ար. թր. 10. վեցամս. 5.— Վարձուի վանխիկ են:
ՀԱՍՑԻ.— Կարողիկէ Արձազանգ, Բերա, 5 Պայրամ փողոց, 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.— Արձազանգ կը նրասարակուի Շարաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս՝ պարտաւորեալ չէ անպատեալ կամ նոյնութեամբ նրասարակել իրեն ղրկուած ո՞ր եւ է յօդուած: 3.— Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր խկական անունը ծանուցանել Խմբագրութեան: 4.— Ձեռագիրներ եւ չեն զարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած թղթի վրայ վրայ մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուի: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դանեկանի նամակադրով ի միասին ղրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձազանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս բոլոր տեսակի տպութիւններ կ'ընէ եւ իր իր զարգացման գործը համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցումներ, զրբեր, տետրեր, հրատարակութիւններ, բարդեր, բարդ-աստիճաններ, մանագրներ, եւն., եւն.: Դիմելու ամէն ժամ կ'ընեն: Գեղեցկագիտական աշխատանքներ եւ տպագրական մագրութեան կողմանէ յանձնարարներ անհատական զո՞ք պիտի մնան: